Արձանագրություն N 2

2022 թվականի առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ դեղերի (հակահեմոֆիլիկ) ձեռք բերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/9» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «05» «Հունվար» 2022թ.
ժամը 14:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Վ. Հակոբյան
Հանձնաժողովի անդամներ	Մ. Հարությունյան, Ն. Դանիելյան
Հանձնաժողովի քարտուղար	Հ. Սարգսյան

1. Գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

(Վ. Հակոբյան)

Ընդունել ի գիտություն, որ 03.12.21թ. հրապարակվել է հրավեր էլեկտրոնային աճուրդ համակարգում: Հայտերի ներկայացման վերջնաժամկետը՝ 2021 թվականի դեկտեմբերի 20-ին, ժամը 14:00-ին, իսկ հակադարձ աճուրդի մեկնարկը՝ 2021 թվականի դեկտեմբերի 21-ին ժամը 14:00-ին: 2021 թվականի դեկտեմբերի 22-ին ժամը 11:00-ին գնահատող հանձնաժողովը հրավիրել է նիստ՝ հաղթող մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատելու նպատակով:

Հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության էլ. հասցե	Կազմակերպության ՀՎՀՀ
1	«Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ	mercado@netsys.am	00471216
2	«Արֆարմացիա» ՓԲԸ	arpharm.armenia@yahoo.com	02505735
3	«Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ	tender@mlnpharm.am	02567316
4	«Ջիարջի» ՍՊԸ	garg.llc@mail.ru	02835324

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Վ. Հակոբյան)

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարներում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Վ. Հակոբյան)

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված են հրավերի պահանջներին համապատասխան: Սակայն 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում (տեխնիկական բնութագրում) ի հայտ եկան անճշտություններ՝ մասնավորապես ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը և արտադրողի անվանումը: Ուստի գնահատող հանձնաժողովը ընդունեց որոշում առաջարկել մասնակցին մեկ աշխատանքային որում շտկել արձանագրված անճշտությունները և էլեկտրոնային աճուրդ համակարգում ներբեռնել շտկված ապրանքի ամբողջական նկարագրի (տեխնիկական բնութագրի) տարբերակը, ինչպես նաև ներկայացնել ՀՀ Կառավարության 2013 թվականի մայիսի 02-ի «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և այլ միջոցների հաշվին գնվող դեղերի տեխնիկական բնութագրերի կազմման չափորոշիչները հաստատելու մասին» թիվ 502-Ն որոշման 2.2 կետի պահանջներին համապատասխան Ձեր կողմից առաջարկվող ապրանքի մասով՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից տրված հավաստող տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված միջազգային մասնագիտական կազմակերպությունների անդամ երկրում գրանցված լինելու կամ Առողջապահության համաշխարհային կազմակերպության նախաորակավորում ունենալու մասին: «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներբեռնվել են առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի (տեխնիկական բնութագրի) շտկված տարբերակը և պահանջվող վերոնշյալ տեղեկանքը: Ուստի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվեց բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Մասնակիցների առաջարկաց գների մասին

(Վ. Հակոբյան)

Մասնակիցների կողմից ներկայացված վերջնական գները 16.12.2021թ.-ին կայացած հակադարձ աճուրդից հետո ներկայացվում են կից ֆայլով (excel):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Վ. Հակոբյան)

Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներ որոշելու մասին

(Վ. Հակոբյան)

Որոշվեց. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/9» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել՝ «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Ընթացակարգի ամփոփման մասին

(Վ. Հակոբյան)

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման պահանջները և մասնակիցների կողմից ներկայացված հայտերը՝

Որոշվեց.

1. «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/9» ծածկագրով գնման ընթացակարգը ամփոփել, հաղթող ճանաչել և կնքել պայմանագիր՝
   - «Թեոֆարմա Իմպորտ» ՍՊԸ-ն՝ 82,800,000 ՀՀ դրամ պայմանագրային գումարով:
2. Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշման 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝ մերժել «Արֆարմացիա» ՓԲԸ-ի, «Մ.Լ.Ն. Ֆարմ» և «Ջիարջի» ՍՊԸ-ների հայտերը՝ վերջիններիս կողմից ներկայացված գնային առաջարկները նախահաշվային գնից բարձր լինելու պատճառով:
3. Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «ՀՀ ԱՆ ԷԱՃԱՊՁԲ-2022/9» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ սահմանել 06.01.2022թ.-ից մինչև 15.01.2022թ.-ը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Վ. Հակոբյան

Անդամներ՝ ---------- Մ. Հարությունյան

---------- Ն. Դանիելյան

Քարտուղար՝ ---------- Հ. Սարգսյան

2022 թվականի կարիքների համար ձեռք բերվելիք դեղերի (հակահեմոֆիլիկ մարդկային VIII գործոնի) վերաբերյալ վերջնական գներով

NN	Դեղի անվանումը	Քանակ	Նախահաշվային		«Թեռֆարմա Իմպորտ» ՍՊԸ				«Արֆարմացիա» ՓԲԸ			
			Միավորի գին	Գումար	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին ԱԱՀ-ով	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին ԱԱՀ-ով
1	Մարդու արյան մակարդման VIII գործոն 500ՄՄ	3,000	27,800.00	83,400,000.00	69,000,000.00	13,800,000.00	82,800,000.00	27,600.00	88,800,000.00	17,760,000.00	106,560,000.00	35,520.00

2022 թվականի կարիքների համար ձեռք բերվելիք դեղերի (հակահեմոֆիլիկ մարդկային VIII գործոնի) վերաբերյալ վերջնական գներով

NN	Դեղի անվանումը	Քանակ	Նախահաշվային		«Մ.Լ.Ն. Ֆարմ» ՍՊԸ				«Ջիարդի» ՍՊԸ			
			Միավորի գին	Գումար	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին ԱԱՀ-ով	Արժեք	ԱԱՀ	Գումար	Միավորի գին ԱԱՀ-ով
1	Մարդու արյան մակարդման VIII գործոն 500ՄՄ	3,000	27,800.00	83,400,000.00	100,000,000.00	20,000,000.00	120,000,000.00	40,000.00	750,000,000.00	150,000,000.00	900,000,000.00	300,000.00